

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

## **ԿՈՒՐՂԻՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՄԱՐՏԻՆԻ**

**ՊԵՏՈՒԹՅՈՒՆ – ՄԱՍՆԱԿՈՐ ՀԱՏՎԱԾԻ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)**

**Ը. 00.02. - «Տնտեսություն, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտություն ամբ. տնտեսագիտություն թեկնածուի գիտական աստիճանի հայ ցման արեւախոսություն**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2018**

**Ատենախոսությունը անթեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան  
տնտեսագիտությունը ինստիտուտում**

**Գիտական ղեկավար՝**

տնտեսագիտությունը դոկտոր  
**Տիգրան Վլադիմիրի  
Յարությունյան**

**Պաշտոնական  
ընդդիմախոսներ՝**

տնտեսագիտությունը դոկտոր,  
պրոֆեսոր  
**Սամսոն Աշոտի Դավոյան**

տնտեսագիտությունը թեկնածու  
**Էլյանորանորայրի Մաթևոսյան**

**Առաջատար  
կազմակերպություն՝**

**Հայաստանի ազգային ագրարային  
համալսարան**

**Պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի հունվարի 26-ին ժամը  
15<sup>00</sup>-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի  
Տնտեսագիտությունը թիվ 015 Մասնագիտական խորհրդի նիստում:**

**Հասցեն՝ 0009, քաղ. Երևան, Աբովյան փող. 52:**

**Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ Երևանի պետական  
համալսարանի գրադարանում:**

**Սեղմագիրն առաքված է 2017 թվականի դեկտեմբերի 25-ին:**

**015 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր**

**Ա.Յ. ԱՆԱԲԵԼՅԱՆ**

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**Հետազոտությունը արդիականությունը:** Պետությունը – մասնավոր  
հատվածի համագործակցությունը արդիական հիմնահարց է ոչ միայն

Հայաստանի Հանրապետության և Երկրի տնտեսության սոցիալ-տնտեսական առաջընթացի համար, այլ նաև դարձել է աշխարհի երկրների ճնշող մեծամասնության տնտեսությունների մրցունակության և արդյունավետության բարձրացման հիմնական գործիքը: Ըստ որում, հատկապես շուկայական տնտեսություն ունեցող նախկին համայնավարական երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, պետության և նոր ձևավորվող ու կայացող մասնավոր հատվածի համագործակցությունը, այդ երկու կողմների միջև փոխհարաբերությունների կառավարումը դարձել են օբյեկտիվ անհրաժեշտություն և ազատ շուկայական միջավայրի զարգացման և, հետևաբար, բնակչության կենսամակարդակի բարձրացման ու աշխատատեղերով ապահովման կարևոր երաշխիքներ: Ակնհայտ է նաև, որ ՀՀ-ում նախկինում իրականացված՝ բնակարանների, հողի և գյուղատնտեսական տեխնիկայի, և ներկայումս էլ շարունակվող պետական գույքի մասնավորեցման ծրագրերը, քաղաքացիների նախածեռնությունների հիման վրա սեփական գործի կայացման արդյունքում ստեղծված տնտեսության մասնավոր հատվածը (այն գնահատվում է ՀՆԱ-ի 80%-ից ավելի) ներկայումս ունի գերիշխող դիրք, ինչն իր արտացոլումը ստացավ ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով) 11-րդ՝ «Տնտեսական կարգը» հոդվածում, որտեղ նշված է. «Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը»<sup>1</sup>:

Պետության – մասնավոր հատվածի համագործակցությունն իր վրա է կրում տնտեսությունում ընթացող գրեթե բոլոր գործընթացները: Ներկայումս ՀՀ-ում նկատվում է տնտեսության ցածր մրցունակություն, ցածր է նաև տնտեսական ակտիվությունը և տնտեսական աճի տեմպը (2016թ.-ին այն կազմել է 0,2%), հանրապետությունում զգացվում է ներդրումների սուր կարիք, մեծ է բնակչության արտագաղթի ցուցանիշը: Ի թիվս նշված գործոնների, մեզանում դեռևս չի ձևավորվել պետության և մասնավոր հատվածի արդյունավետ համագործակցության պրակտիկան, որն էլ իր հերթին խոչընդոտում է սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանն ու բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Հետագա առաջընթացի և տնտեսական աճի տեմպերի ավելացման տեսանկյունից անհրաժեշտություն է առաջացել գնահատել ու պետության-մասնավոր հատված զարգացմանը և համագործակցությանը նպաստող, ինչպես նաև խոչընդոտող

<sup>1</sup> «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ», ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեյով: Տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայքում՝ [www.arlis.am](http://www.arlis.am)

գործունեներն ու հանգամանքները, բացահայտել այդպիսի համագործակցության ծրագրերում տեղ գտած թերուղյակներն ու բացթողումները, ինչպես նաև առաջարկել նոր մոտեցումներ և լուծումներ տեղ գտած թերուղյակների վերացման և հետագա համագործակցության արդյունավետության բարձրացման ու բարելավման համար:

2017 թվականի հունիսի 19-ի ՀՀ կառավարության անհատական որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-2022 թվականների ծրագիրը, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է հունիսի 22-ին: Հատկանշական է, որ ծրագիրը նախատեսում է պետության և մասնավոր հատվածի համագործակցության բազմաթիվ ոլորտներ, որոնցից են՝ պետական կառավարման համակարգի արդիականացումը, պետական գույքի կառավարումը, ջրային տնտեսությանը, գյուղատնտեսությանը, տրանսպորտը, տեղեկատվական տեխնոլոգիաները, բնապահպանությանը, մշակույթը, ինչպես նաև քրեակատարողական համակարգը<sup>2</sup>:

Կարևոր է նաև ընդգծել, որ պետություն – մասնավոր հատվածի համագործակցության հիմնահարցերը, ամբողջությամբ վերցրած, դուրս են մնացել տնտեսագետ-հետազոտողների ուշադրության կենտրոնից: Բացի այդ, վերջին տարիներին պետություն – մասնավոր հատված համագործակցության բնագավառում կուտակվել են բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք պահանջում են գիտական՝ հիմնավորված լուծումներ: Այդ պատճառով էլ ոլորտի համագործակցության հիմնախնդիրների բացահայտումը և համապատասխան լուծումների առաջադրումը արդիական են դարձնում ատենախոսության ընտրված թեման:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** ՌԻՍՈԼ մնասիրության օբյեկտը ՀՀ պետություն – մասնավոր հատվածն է, իսկ ուսումնասիրության առարկան՝ պետություն – մասնավոր հատվածի համագործակցության հարաբերություններն են ու դրանց բարելավման ուղիները:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** ՌԻՍՈԼ մնասիրության հիմնական նպատակն է հիմնավորել ՀՀ-ում պետություն – մասնավոր հատվածի համագործակցության հիմնական ուղղությունները, ինչպես նաև առաջարկություններ ներկայացնել այդ համագործակցության բարելավման և արդյունավետության բարձրացման համար:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

➤ ուսումնասիրել տնտեսական ազատության ապահովման նշանակությունը շուկայական տնտեսության անցման գործում,

<sup>2</sup> ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 646-Ա որոշումը, էջ 10, 19, 29, 30, 68, 73, 74, 79, 81, 82, 95, 96, 112, 113, 115, 118: Տե՛ս ՀՀ կառավարության պաշտոնական կայքում՝ [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/kar/2017/06/17\\_646\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2017/06/17_646_1.pdf)

➤ դիտարկել անցումային տնտեսությամբ երկրների բարեփոխումները պետական և մասնավոր հատվածների ձևավորման համատեքստում,

➤ վերհանել տնտեսության մեջ մասնավոր հատվածի հաշվարկման մեթոդաբանությունը և հիմնական ցուցանիշները,

➤ ուսումնասիրել «պետություն – ձեռնարկատիրություն – հասարակություն» համագործակցության հիմքերը,

➤ վերլուծել ՀՀ ՀՆԱ-ի արտադրությունն ըստ ազգային տնտեսության կառուցվածքային հատվածների,

➤ քննարկել պետություն – մասնավոր հատվածի համագործակցության ձևերը ՀՀ-ում,

➤ դիտարկել տնտեսության պետական ու մասնավոր հատվածների համագործակցության տնտեսա-իրավական և գույքային սպեկտրերը,

➤ ուսումնասիրել պետական օժանդակ կառավարչական ծառայությունների օպտիմալացման ուղղությունները և դրանք մասնավոր հատվածից ձեռք բերման հնարավորությունները,

➤ առաջարկել բարեփոխումների իրականացման ուղիներ, որոնք ուղղված են պետություն – մասնավոր հատված համագործակցության կառավարման հիմնական ձևերի բարելավմանը:

**Ատենախոսության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:** Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել պետություն – մասնավոր հատվածի համագործակցության վերաբերյալ տարբեր տնտեսագետների կողմից լայն կիրառություն ստացած հրապարակումները, հետազոտությունները, ինչպես նաև առաջադրած տեսական ու վերլուծական բնույթի գիտա-գործնական նշանակություն ունեցող հիմնադրույթները:

ՌԲ ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության որոշումներն ու հայեցակարգերը, ՀՀ ԱԿԾ-ի, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պաշտոնական տվյալներն ու հրապարակումները, Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի, ինչպես նաև այլ կազմակերպությունների կողմից հրապարակված զեկույցները, հաշվետվություններն ու պաշտոնական վիճակագրությունը:

ՌԲ ուսումնասիրության ընթացքում կիրառվել են վիճակագրական, համեմատական, խմբավորումների և վերլուծության ու ամփոփումների մեթոդները:

**Հետազոտության գիտական նորույթը:** ՌԲ ուսումնասիրության արդյունքում մշակվել և ստացվել են գիտա-գործնական նշանակության արդյունքներ, որոնց բովանդակությունը կայանում է հետևյալում՝

1. Հայաստանի ազգային հաշիվների համակարգի հիման վրա վերլուծվել և գնահատվել են հանրապետության ՀՆԱ-ի արտադրությունն ըստ ազգային տնտեսության կառուցվածքային

հատվածների, տնտեսական գործունեության տեսակների և բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշների, ինչպես նաև բացահայտվել ու հիմնավորվել են ըստ տնտեսության հատվածների առանձին կառուցվածքային միավորների (ոչ ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ), ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ), պետական կառավարման մարմիններ, տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններ, տնային տնտեսություններ) զարգացման համամասնությունները և դրանց միջև տեղ գտած անհավասարակշռությունները:

2. Բացահայտվել է, որ ՀՀ տնտեսության կառուցվածքային մյուս հատվածների համեմատությամբ «Պետական կառավարման մարմիններ» կառուցվածքային հատվածի ՀՆԱ-ն տնտեսության ՀՆԱ-ի նկատմամբ 2000-2014 թվականներին ունեցել է 176,8% առաջանցիկ աճ (այսինքն՝ տնտեսության ՀՆԱ-ի 1%-անոց աճին բաժին է հասել այդ հատվածի 1,77% աճ), ինչն էլ հանգեցրել է կառուցվածքային այդ հատվածի տեսակարար կշռի ավելացմանը ՀՆԱ-ում 2000-2014 թթ.-ին 2,0 տոկոսային կետով: Նշված անցանկալի զարգացումները կանխելու նպատակով առաջարկվել է «Պետական կառավարման մարմիններ» կառուցվածքային հատվածում իրականացնել այնպիսի բարեփոխումներ, որոնք կնվազեցնեն այդ հատվածի ծառայությունների ծախսերը՝ դրանք մրցակցային և այլ ընտրանքային աղբյուրներից ու մասնավոր հատվածի ներուժի լայնորեն օգտագործմամբ, հատկապես օժանդակ կառավարչական ծառայությունները, ձեռք բերելու արդյունքում:

3. Հիմնավորվել և գնահատվել է ՀՀ տնտեսության զարգացման գործում պետություն – մասնավոր հատվածի համագործակցության կառավարման այն առաջնահերթ հարաբերությունների կանոնակարգման անհրաժեշտությունը և դրա հիմնական այնպիսի ձևերի բարելավումը, ինչպիսիք են՝ հավատարմագրային կառավարումը, լիզինգը (ֆինանսական վարձակալությունը), պետական գույքի գրավադրումը՝ ներդրումների ներգրավման նպատակով, պետական գույքի փոխանակությունը, ինչպես նաև ուրվագծվել են այդ հարաբերությունների կանոնակարգման հիմնական դրույթները:

**Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը:** Ատենախոսությունը գիտական հետազոտություն է, որտեղ կատարված վերլուծություններից բխող հետևություններին և եզրահանգումների հիման վրա կատարված առաջարկությունները, ինչպես նաև պետություն – մասնավոր հատվածի համագործակցության խորացման և բարելավման հիմնախնդիրների լուծումներից ելնելով առաջարկված միջոցառումները կարող են օգտագործվել օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ պետություն – մասնավոր հատվածի համագործակցության հետագա զարգացման, այնպիսի համագործակցության արդյունավետության բարձրացման և այդ

հիմքերի վրա տնտեսության տարբեր ոլորտներում (և, հատկապես, սոցիալական ու արտադրական ենթակառուցվածքներում) ներդրումների ներգրավման, համագործակցության օրենսդրական բազայի կատարելագործման, օժանդակ կառավարչական ծառայությունների օպտիմալացման և մասնավոր հատվածի կողմից դրանց ձեռքբերումները ընդլայնելու ուղղությամբ իրականացվող աշխատանքների ժամանակ:

Ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել ՀՀ օրենսդիր, պետական կառավարման գործադիր, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ձեռնարկատիրության և պետության – մասնավոր հատվածի համագործակցության հիմնախնդիրներով հետաքրքրվող տնտեսագետների, իրավաբանների և այդ հարաբերությունների կատարելագործմամբ զբաղվող այլ հետազոտողների կողմից:

**Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:** Ատենախոսության հիմնադրույթները և ստացված արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունը արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 6 (վեց) գիտական հոդվածներում:

**Ատենախոսության ծավալն ու կառուցվածքը:** Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը շարադրված է 174 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

## **ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**Ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, կիրառման ոլորտները, ձևակերպված են հետազոտության նպատակն ու խնդիրները, տրված են հետազոտության առարկան և օբյեկտը, ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գործնական նշանակությունը:

**Ատենախոսության առաջին՝** «Պետություն – մասնավոր հատվածի համագործակցության ժամանակակից հիմնախնդիրները» գլխում ուսումնասիրվել են վերջին 25 տարիների ընթացքում նախկին համայնավարական երկրների տնտեսությունների բարեփոխումների փորձն ու արդյունքները, որի հիմնական ամփոփումը հանգում է նրան, որ տնտեսական ազատությունը երկրի մասնավոր հատվածի զարգացման հիմնական նախադրյալն է: Աշխատության այս մասում ներկայացվել են անցումային տնտեսությամբ երկրների բարեփոխումները՝ պետական և մասնավոր հատվածների ձևավորման համատեքստում, տնտեսության մեջ մասնավոր հատվածի մասնաբաժնի հաշվարկման մեթոդաբանությունը և հիմնական ցուցանիշները,

որոնց հիման վրա կատարվել են համապատասխան ամփոփումներ ու եզրահանգումներ: Յեղիևակն անդրադարձել է «պետություն – ձեռնարկատիրություն - հասարակություն» համագործակցության հիմքերի ուսումնասիրությանը, այդպիսի համագործակցության նախընտրելի տարբերակներին և սպասվելիք արդյունքներին:

Երկրի տնտեսությունում պետական և մասնավոր հատվածների հարաբերակցության վերաբերյալ միասնական, բոլորի կողմից ընդունված մոտեցում չկա. յուրաքանչյուր երկրում այն պայմանավորված է բազմաթիվ և բազմաբնույթ գործոններով, երկրի առջև կանգնած սոցիալ-տնտեսական ու քաղաքական խնդիրներով, դրանց լուծման տարբեր ուղիներով և մի շարք այլ գործոններով: Այն հայտ է նաև, որ այդ հարաբերակցությունը և դրա նկատմամբ կիրառվող տնտեսական քաղաքականությունը այլ է շուկայական տնտեսություն ունեցող<sup>3</sup> և շուկային անցնող (անցումային) երկրներում:

Անցումային տնտեսությամբ երկրների 25-ամյա բարեփոխումների ժամանակահատվածի հիմնական արդյունքներն ամփոփելիս կատարվել են մի շարք եզրահանգումներ: Դրանցից առաջինն այն է, որ բացառությամբ Բելառուսի, բոլոր ոչ-ասիական հետհամայնավարական անցումային երկրները երկար ճանապարհ անցան կենտրոնական պլանավորման վրա հիմնված տնտեսությունից դեպի շուկայական համակարգերի: Այդ երկրների մի մասում (Չեխիա, Սլովակիա, Լեհաստան, Յունգարիա, Էստոնիա, Լատվիա, Լիտվա) բարեփոխումները համարվում են ավարտված<sup>4</sup>, մյուսներում՝ շարունակվող: Երկրորդ, ՎՉԵԲ-ի կողմից հրապարակված տվյալները վկայում են բարեփոխումների գործում առավել հաջողված են համարվել այն երկրները, որոնք բարեփոխումների սկզբից նախաձեռնել էին կտրուկ փոփոխություններ, որոնք էլ շարունակում են հաստատակամորեն առաջ շարժվել, իսկ աստիճանական բարեփոխումների կողմնակիցները, ընդհակառակը, դանդաղեցրել են բարեփոխումների ընթացքը: Երրորդ, արագընթաց և աստիճանական բարեփոխումների մոդելների հիմնական ուրվագիծը ձևավորվել է բարեփոխումների առաջին չորս-հինգ տարիների ընթացքում: Չորրորդ, նախկին համայնավարական երկրների ինստիտուցիոնալ զարգացումը փաստացի զիջում է տնտեսական ազատականացման տեմպերին: Յինգերորդ, Կենտրոնական Եվրոպայի և Բալթյան այն երկրները, որոնք ներկայում շուկայի ազատականացման լավագույն արդյունքներն ունեն, հաջողություններ են ունեցել նաև ժողովրդավարացման գործում: Վեցերորդ, որոշ երկրներում անցումային գործընթացը հանգեցրեց օլիգարխիկ դասի առաջացման, որն օգտագործում է

<sup>3</sup> Տե՛ս, օրինակ, Քոտբարդ Մ. Власть и рынок: Государство и экономика. Пер. с англ., Челябинск: Социум, 2003.

<sup>4</sup> Տե՛ս, մասնավորապես, Gerard Roland. «Transition in Historical Perspective» և «Transition Report 2013: Stuck in Transition». European Bank for Reconstruction and Development, London: EBRD, 2013, 124 pages.



քաղաքականության վրա ազդելու, իր մենաշնորհային կարգավիճակն, ինչպես նաև խոչընդոտում է իսկապես բաց և մրցակցային շուկայական տնտեսության կայացմանը: Եվյոթերորդ եզրահանգումն այն է, որ «ջանքերն ու արդյունքները» դրականորեն փոխկապակցված են, այսինք՝ այն երկրները, որոնք առավել չափով են ազատականացրել իրենց տնտեսությունները, ապահովել են մեկ շնչի հաշվով ամենաբարձր ՀՆԱ-ի ցուցանիշը: Այդ երկրներում գոյություն ունի բնակչության տարբեր խմբերի միջև եկամուտների բաշխման տարբերության ամենափոքր ճեղքվածքը, արձանագրվել են աղքատության մակարդակի աճի ամենացածր ցուցանիշները և, ամենակարևորը, գրանցվել են մարդկային զարգացման համաթվի (Human Development Index - HDI) լավագույն արդյունքները:

Ձարգացած երկրներում ձեռնարկատիրության վարկանիշի բարձրացումը պայմանավորված է «պետության - մասնավոր հատված - հասարակության» փոխշահավետ կապերի հաստատմամբ, որտեղ իր ուրույն դերն ունի մասնավոր (ոչ պետական) հատվածը և դրանում գոյություն ունեցող հարաբերությանները: Պետական և մասնավոր հատվածների փոխհամագործակցության հիմքում ընկած են տնտեսական գործիքների և լծակների օպտիմալ կառավարումը, տնտեսական, իրավական, քաղաքական արտոնությունների տրամադրման համակարգը, համեմատական առավելությունները և այլն<sup>5</sup>: Ձեռնարկատիրության և պետության շահերը կարող են նաև չհամընկնել, քանի որ առաջինների հիմնական շահադրդումը շահույթ ստանալն է, իսկ վերջինիս շահը՝ տնտեսական, սոցիալական և մշակութային քաղաքականության իրականացումն է, եկամուտների վերաբաշխումը, պետական կառավարումը և այլն<sup>6</sup>:

Հեղինակն ուսումնասիրում է պետության և ձեռնարկատիրության միջև համագործակցության իրականացման պայմանները, սկզբունքներն ու ռազմավարությունները: Պետության քաղաքական դիրքորոշումից, հասարակության վարքագծից և տնտեսավարող սուբյեկտների ակտիվությունից կախված, երեք կողմերը կարող են մշակել և իրագործել տարբեր ռազմավարություններ (համագործակցություն, հակազդեցություն, միակողմանի համագործակցություն, կոմպրոմիսային, խորհրդատվական համագործակցություն), որոնք դիտարկվում են հեղինակի կողմից՝ ամփոփելով մյուս հետազոտողների կարծիքները:

Աշխատությունում առանձնացվում են պետության և ձեռնարկատիրության համագործակցության հետևյալ մոդելները<sup>7</sup>.

<sup>5</sup> Уколов В.Ф. Взаимодействие власти, бизнеса и общества: учебник, М.: ЗАО «Издательство «Экономика», 2009, с. 237.

<sup>6</sup> Валитов Ш.М. Взаимодействие власти и бизнеса: сущность, новые формы и тенденции, социальная ответственность, Казань: Экономика, 2009, с. 8.

<sup>7</sup> Батаева, Б.С. Политика российских компаний в отношении местных сообществ в решении социальных проблем регионов, Экономика и управление, 2010, №9, с. 26-31.

- «ճնշման և հարկադրանքի» մոդել, որն իր մեջ ներառում է վարչարարական հարկադրանքի ծակները,
- «պատրոնաժի» մոդել, որն իր մեջ ներառում է մասնավոր հատվածի ծախսերի փոխհատուցում՝ ինպաստոցիալ ական ծրագրերի իրականացման,
- «չմիջամտության» մոդել, երբ իշխանությունները բացարձակապես չեն միջամտում օցիալ ական քաղաքականությանը,
- «համագործակցության» մոդել, որը կառուցված է երկու կողմերի (պետական և մասնավոր հատվածների) փոխշահավետ համագործակցության և շահերի փոխադիջման վրա:

Գծանկար 1-ում ներկայացված է Deloitte & Touche խորհրդատվական ընկերության կողմից առաջարկված սխեման, որը թույլ է տալիս դասակարգել ՊՄՅ մոդելները՝ կախված մասնավոր հատվածի ներավայելիությունների փոխանցման աստիճանից:

<b>Նախագծեր</b>					
Նախագծում, շինարարու թյուն (DB)	Նախագծում, շինարարու թյուն, պահպանում (DBM)	Նախագծում, շինարարու թյուն, շահագործում (DBO)	Նախագծում, շինարարու թյուն, շահագործում, սպասարկում (DBOM)	Շինարարութ յուն, տիրապետում, շահագործում, փոխանցում (BOOT)	Շինարարութ յուն, տիրապետում, շահագործում (BOO)
<b>Պետության պատահանառնությունները</b>			<b>Մասնավոր</b>		
<b>գործընկերոջ պատահանառնությունները</b>					
	Ծառայության մատուցման պայմանագիր	Կառավարման պայմանագիր	Վարձակալ ության պայմանագիր	Կոնցեսիա	Մասնավորե ցում
<b>Գոյություն ունեցող օբյեկտները և ծառայությունները</b>					

Աղբյուրը. Closing the Infrastructure Gap: The Role of Public-Private Partnerships. A Deloitte Research Study. 2006.

**Գծանկար 1. Պետություն – մասնավոր հատված գործընկերության մոդելները**

ՊՄՅ զարգացման համաշխարհային միտումների վերլուծությունը հեղինակին թույլ է տվել ձևակերպել պետական (համայնքային) սեփականության կառավարման առաջնահերթ խնդիրները՝ հաշվի առնելով գործընկերության կառուցակարգերը:

**Ատենախոսության երկրորդ՝ «Պետություն – մասնավոր հատվածի համագործակցության ամանձնատնայությունները Զայաստանի Զանրապետությունում»** գլխում հեղինակը դիտարկում է հանրապետության ԶՆԱ-ի արտադրությունը՝ ըստ ազգային տնտեսության կառուցվածքային հատվածների, ենթահատվածների, տնտեսական գործունեության տեսակների, ինչպես նաև ԶՆԱ-ի բաշխվածությունը ըստ վերահսկողության հատկանիշի: Ատենախոսության երկրորդ գլխում ուսումնասիրվում է

պետություն - մասնավոր հատված համագործակցության ձևավորումը  
Հայաստանի Հանրապետությունում և այդ նպատակով ընդունված  
հայեցակարգը, իրավական ակտերը, քննարկվում են նաև  
գործնականում իրականացված համագործակցության դեպքերը՝  
իրենց բնորոշ կարգավորման կառուցակարգերով,  
առանձնահատկություններով:

Ատենախոսությունում իրականացված՝ ոչ ֆինանսական և  
ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների)  
հատվածների համախառն ավելացված արժեքի (հիմնական գներով)  
փոփոխությունները, ըստ սեփականության ենթահատվածների, ցույց  
են տալիս, որ 2014թ.-ին 2000թ.-ի համեմատությամբ.

➤ ֆինանսական հատվածի ավելացված արժեքի (համախառն  
հիմնական գներով) 2000-2014թթ. ընդամենը մեծության 31.8%-ը  
ստեղծվել է պետական, 40.9%-ը՝ ազգային մասնավոր, 41.1%-ը՝  
օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող ենթահատվածներում,  
իսկ 2000թ.-ի համեմատությամբ 2014թ.-ին դրանք կրել են զգալի  
կառուցվածքային փոփոխություններ, որի հետևանքով դրանց  
բաժինը թողարկված ՀՆԱ-ի կազմում կրել է համապատասխանաբար՝  
-36.5, 17.4 և 19.1 տոկոսային կետով տեղաշարժեր,

➤ ոչ ֆինանսական և ֆինանսական հատվածի ավելացված  
արժեքի (համախառն հիմնական գներով) 2000-2014թթ. ընդամենը  
մեծության 11.3%-ը ստեղծվել է պետական, 62.2%-ը՝ ազգային  
մասնավոր, 26.4%-ը՝ օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող  
ենթահատվածներում, իսկ 2000թ.-ի համեմատությամբ 2014թ.-ին դրանք  
կրել են զգալի կառուցվածքային փոփոխություններ, որի  
հետևանքով դրանց բաժինը թողարկված ՀՆԱ-ի կազմում կրել է  
համապատասխանաբար՝ -12.9, -4.0, 16.9 տոկոսային կետով տեղաշարժեր:

Ինչ վերաբերում է ՀՀ ՀՆԱ-ին, ըստ տնտեսության հատվածների և  
վերահսկողության հատկանիշի, ապա 2000-2014թթ. տվյալների  
վերլուծությունից հետևում է, որ՝

➤ 2000-2014թթ.-ին ոչ ֆինանսական կազմակերպությունների  
(կորպորացիաների) ՀՆԱ-ի միջին տարեկան մեծությունը պետական  
սեփականության ենթահատվածում կազմել է 145.1 մլրդ դրամ  
(հատկապես, սկսած 2010թ.-ից նկատելիորեն ավելացել է  
սեփականության այս ձևի ծավալները), ազգային մասնավոր  
ենթահատվածինը՝ 952.4 մլրդ դրամ, օտարերկրյա վերահսկողության  
տակ գտնվող ենթահատվածինը՝ 407.9 մլրդ դրամ, ընդամենը՝ 1505.3  
մլրդ դրամ, իսկ 2014թ.-ի ցուցանիշը 2000թ.-ի ցուցանիշի նկատմամբ  
աճել է 346.9%-ով: Այդ ցուցանիշները ֆինանսական  
կազմակերպությունների (կորպորացիաների) համար կազմել են  
համապատասխանաբար՝ 12.4 մլրդ դրամ, 36.6 մլրդ դրամ, 41.6 մլրդ դրամ,  
90.6 մլրդ դրամ, 1097.3%, պետական կառավարման մարմիններինը՝ 208.8  
մլրդ դրամ, իսկ 2014թ.-ը 2000թ.-ի նկատմամբ՝ 581.5%: Այսինքն, 2014թ.-  
ին 2000թ.-ի համեմատաբար պետական կառավարման մարմինների հատվածում  
կատարված ծախսը (ՀՆԱ-ն) ոչ ֆինանսական կազմակերպությունների  
(կորպորացիաների) ստեղծած ՀՆԱ-ի մեծությունը գերազանցել է

167.6%-ով (581.5% : 346.9%), ինչն անկասկած արդյունքի (բարիքների) ստեղծման տեսանկյունից արդարացված չէ: Նույնը վերաբերում է նաև ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածին, որտեղ 2000թ.-ի համեմատ 2014թ. ՅԱ մեծություները աճել է 1097.3%-ով: Այլ կերպ ասած, ինչպես ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների), այնպես էլ պետական կառավարման մարմիններում ՅԱ-ի աճը 2014թ.-ին 2000թ.-ի համեմատ զգալիորեն գերազանցել է ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) ՅԱ-ի աճի ցուցանիշին:

Հեղինակը քննարկում է մասնավոր հատվածի ձևավորման երկու ուղիները՝ պետական գույքի ապապետականացումը (մասնավորեցումը) և նոր մասնավոր ընկերությունների ստեղծումը: Տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում իրականացված պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) ծրագրերի արդյունքում ՀՀ-ում ձևավորվեց գերազանցապես սեփականության մասնավոր իրավունքի վրա հիմնված տնտեսություն, որտեղ ՅԱ-ի ավելի քան 80%-ը ստեղծվում է մասնավոր հատվածում:

Վերջին տարիներին պետական գույքի մասնավորեցմանը զուգահեռ զգալիորեն ավելացել են պետական գույքի օտարման գործարքները: Պետական գույքի և գույքային իրավունքների մասնավորեցման, օտարման, պետական գույքի օգտագործման տարբեր ձևերով մասնավոր հատվածին տրվող ակտիվները մեծացնում են ՀՀ-ում մասնավոր հատվածի տնտեսական ներուժը: Պետական գույքի մասնավորեցումից, օտարումից, վարձակալությունից և օգտագործման տրամադրումից ստացված ընդհանուր դրամական մուտքերը 2012-2016 թվականներին ներկայացված են աղյուսակ 1-ում: Պետք է նկատի ունենալ, որ պետական գույքի մասնավորեցումից և օտարումից ստացված միջոցները բաշխվում են ՀՀ պետական բյուջեի և այն համայնքային բյուջեների միջև, որտեղ տեղաբաշխված է մասնավորեցված կամ օտարված անշարժ գույքը՝ օրենքով սահմանված համամասնություներով<sup>8</sup>:

**Աղյուսակ 1**

**Պետական գույքի մասնավորեցումից, օտարումից, վարձակալությանից և օգտագործման տրամադրումից ստացված դրամական մուտքերը 2012-2016 թվականներին, մլն ՀՀ դրամ**

	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	Ընդամենը 2012թ.-2016թթ.-ին
1. Մասնավորեցում	353.3	455.9	178.4	52.0	63.0	1102.5
2. Օտարում	807.4	1493	1665.6	2436.3	6868.6	13270.9
3.	241.3	303.4	277.5	265.8	227.8	1315.7

<sup>8</sup> Տե՛ս «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի հոդված 28-ը (համապատասխան փոփոխություններով և լրացումներով), «Հայաստանի Հանրապետության բյուջե տային համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ը, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայքը՝ [www.arlis.am](http://www.arlis.am):

Վարձակալության						
4. Կապի սարքավորումների տեղակայում	-	-	4.4	61.9	89.5	155.8
5. Յոդերի կադաստրային արժեքի վճարում	-	-	57.5	59.4	38.6	155.5
<b>Ընդամենը՝ 5 ուղղությաններով</b>	<b>3414.0</b>	<b>4265.3</b>	<b>4197.4</b>	<b>4890.1</b>	<b>9301.9</b>	<b>16000.4</b>

Աղբյուրը՝ կազմվել է հեղինակի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության 2012-2016 թվականների գործունեության տարեկան հաշվետվության ներքին տվյալներով:

ՀՀ-ում պետության և մասնավոր հատվածի համագործակցության օրինակների շարքում հեղինակն առանձնացրել է մի շարք գործարքներ, մասնավորապես՝ Հայկական երկաթուղին կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու, «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու, ինչպես նաև ՀՀ-ում ջրային համակարգերը վարձակալության հանձնելու մասին որոշումները: Ատենախոսության շրջանակում դիտարկվել են նշված գործարքների էությունը, կարգավորման բնույթը, առանձնահատկություններն ու սպասվելիք արդյունքները:

Քննարկելով պետության և մասնավոր հատվածի համագործակցությանն առնչվող հիմնահարցերը հանրապետությանում, հեղինակը նշում է, որ տնտեսական հարաբերությունների բնույթը վերափոխելու համար Հայաստանի Հանրապետությանում հետևողականորեն իրականացվում է արտադրության միջոցների նկատմամբ սեփականության հարաբերությունների փոխակերպում՝ նպատակ ունենալով հասնել սեփականության բազմաձևության և այդ հիմքի վրա անցում կատարել սոցիալական կողմնորոշում ունեցող շուկայական տնտեսության:

**Ատենախոսության երրորդ՝ «Պետության և մասնավոր հատվածի համագործակցության կատարելագործումը Հայաստանի Հանրապետությանում» գլխում գլխում ներկայացվել են ատենախոսի մոտեցումները, մշակումները հետևյալ ուղղությաններով՝**

- տնտեսության պետական և մասնավոր հատվածների համագործակցության տնտեսա-իրավական և գույքային ասպեկտների բարելավում և կատարելագործում,
- պետական մարմիններում օժանդակ կառավարչական ծառայությունների օպտիմալացման և այդպիսի ծառայությունները մասնավոր հատվածից ձեռքբերման պրակտիկայի ներդրում,
- պետության և մասնավոր հատվածի համագործակցության կառավարման հիմնական ձևերի հետագա բարելավման ուղիների մշակում:

Պետության և մասնավոր հատվածի համագործակցությունը զարգացած և զարգացող երկրներում տարբեր է, ինչը

պայմանավորված է մի շարք էական հատկանիշներով և առանձնահատկություններով, որոնց շարքում կարևոր է զարգացման տարբեր մակարդակների առկայությունը և երկրի անցած ուղին, հանրություն մեջ սեփականության և, առանձնապես մասնավոր սեփականության նկատմամբ վերաբերմունքը և դրա դերակատարության ընկալումը, շուկայական հարաբերություններին ավանդույթները և դրանց պատկերացումները մարդկանց գիտակցության մեջ, հասարակության ներսում գույքային շերտավորման տարբերությունները, արդարության ընկալումները և մասնավոր հատվածի նկատմամբ հանդուրժողական մթնոլորտը, բնակչության սպառման մակարդակը, եկամուտների բաշխման կառուցակարգերը, աղքատության մակարդակը և բազմաթիվ այլ գործոններ:

Յետհամայնավարական երկրների ճնշող մեծամասնությունում մասնավոր հատվածի կայացումն իրականացվեց հիմնականում պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) ճանապարհով: Ներկայումս, սակայն, առաջնահերթ է դառնում սեփականության մասնավոր և պետական ձևերի համագործակցությունը, իսկ որպես այդ փոխգործողությունների կարևոր մաս հանդես է գալիս պետական գույքի կառավարման կատարելագործումը:

Յեղինակի կարծիքով, ՀՀ-ում նպատակահարմար է կիրառել պետական գույքի (ներառյալ՝ Յայաստանի Յանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող շենքերի և շինությունների ու դրանց սպասարկման և օգտագործման համար հատկացված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի, առևտրային կազմակերպություններում պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի (բաժնեմասերի), պետությանը պատկանող գույքային իրավունքների) կառավարման կենտրոնացված մոդելը՝ այդ մոդելին բնորոշ մեխանիզմներով: Նշված մոդելի հիմնական առավելություններն են՝

- պետության՝ որպես գույքի սեփականատիրոջ նպատակների և ակնկալիքների որոշակիությունը,
- գույքի օգտագործման արդյունավետության (իսկ առևտրային կազմակերպությունների դեպքում՝ նաև շահույթաբերության) բարձրացման նպատակադրումը,
- սեփականատիրոջ գործառույթների իրականացման միասնական և հետևողական քաղաքականության ապահովումը,
- պետական գույքի կառավարման ոլորտում ներգրավված պետական տարբեր մարմինների գործողությունների համակարգումը,
- կառավարման թափանցիկության և հաշվետվողականության ապահովումը:

Պետական մարմիններին տրամադրվող առևթուրսին գի գործառույթները կարելի է բաժանել 3 խմբի: Առաջին խումբն

ընդգրկում է սպասարկման գործառույթները, օրինակ՝ տարածքի մաքրման աշխատանքներ, աղբահանություն, հասարակական սնունդ, պահպանության ծառայություններ: Այս խմբի գործառույթները չեն մտնում կառավարման մարմինների գործունեության խնդիրների և առաքելությունների մեջ: Նշված գործառույթների իրականացումը շատ հեշտ է ստանդարտացվում և չի պահանջում կատարողների կրթական և որակական մակարդակի բարձր չափանիշներ: Որպես կանոն, այս խմբի գործառույթները շատ հեշտ կարելի է փոխանցել առևտրորսինգով զբաղվող մասնավոր կազմակերպություններին (անձանց):

Երկրորդ խմբի գործառույթները ներառում են ապահովման գործառույթներ, որոնք պահանջում են կատարողների բավականաչափ բարձր մասնագիտական որակավորում: Այս խմբին են վերաբերում նաև տեղեկատվական տեխնոլոգիաների, ֆինանսների և հաշվապահության, անձնակազմի կառավարման, իրավաբանական աջակցության, փաստաթղթաշրջանառության հետ կապված գործառնական գործառույթները: Վերջին 20 տարիներում պետական հատվածում առևտրորսինգի կիրառումը կապված է առաջին հերթին հենց տվյալ խմբի գործառույթների հետ:

Երրորդ խումբը ներառում է պետական կառավարման հատվածի առանցքային գործառույթների առևտրորսինգի իրականացում: Տվյալ խմբի գործառույթների առևտրորսինգի միջոցով կիրարկումը շատ հազվադեպ է հանդիպում, անգամ առաջատար երկրներում տվյալ հարցը փորձագետների և քաղաքագետների ակտիվ քննարկումների վեճերի առարկա է հանդիսանում:

Այս կամ այն գործառույթների առևտրորսինգի փոխանցման նպատակահարմարության գնահատման մեթոդները տարբեր են, այնուամենայնիվ, դրանք բոլորն էլ հիմնվում են փորձագիտական գնահատականների վրա: Բոլոր մեթոդների հիմնական դրույթները գնահատվում են հետևյալ գործոններով.

- արդյո՞ք առևտրորսինգը կբերի բյուջետային միջոցների խնայողության,
- կնպաստի արդյո՞ք գործառույթների իրականացման որակի բարձրացմանը,
- առկա է արդյո՞ք շուկայում համապատասխան առաջարկ,
- հնարավոր է արդյո՞ք ձևակերպել հստակ պահանջներ գործառույթների իրականացման համար<sup>9</sup>:

Ներկայիս միջազգային փորձը ցույց է տալիս, որ առևտրորսինգը կարող է կիրառվել ոչ միայն զարգացած, այլ նաև զարգացող երկրներում: Հիմնական վտանգը կապված է կոնկրետ գործընթացների և գործառույթների սահմանման, ճիշտ մեթոդաբանության ընտրության հետ:

Հեղինակի կարծիքով, ներկայումս կան բոլոր հիմքերը պնդելու, որ ՀՀ-ում օժանդակ կառավարչական ծառայությունների

<sup>9</sup> <http://www.oecd-ilibrary.org> և <https://www.iaop.org/Content/19/165/1793/Default.aspx>

մեծ մասը կարող է իրականացվել մասնավոր հատվածի կողմից, ինչը մի կողմից, կակտիվացնի մասնավոր հատվածի գործողությունները, և մյուս կողմից էլ, ՀՀ կառավարությանը հնարավորություն կտա էժանացնել ու՝ այդ ծառայությունները օգտագործելով մասնավոր հատվածի մրցակցային հարուստ ներուժը: Պետք է նաև նկատել, որ կառավարության համակարգի օժանդակ ծառայությունների մեծ մասի անցումը մասնավոր հատվածին, կարող է ուղեկցվել այդ ծառայությունների մատուցման միջանկյալ փուլերով (խոշորացում կամ կենտրոնացում), ինչն ի վերջո բերելու է դրանց փոխանցմանը մասնավորին: Այս անխուսափելի գործընթացը կառուցվում է այն ճշմարիտ պնդման վրա, որ մասնավոր հատվածին հատկացված յուրաքանչյուր դրամը պետությանը կապահովի ավելի մեծ արդյունք և դրամական հատուցում:

Քննարկել ավ պետություն - մասնավոր հատվածի համագործակցության կառավարման հիմնական ձևերի բարելավման ուղիները հեղինակը քննարկում է հավատարմագրային կառավարման, \$ինանսական վարձակալության (լիզինգ), ներդրումների ներգրավման նպատակով պետական գույքի գրավադրման, պետական գույքի փոխանակության և մյուս կառուցակարգերը և դրանց կիրառման համար պահանջվող գործիքակազմը, ներառյալ՝ անհրաժեշտ իրավական ակտերը:

**Եզրակացություններ** բաժնում ամփոփված են հետազոտության արդյունքում բացահայտված հիմնախնդիրները, ամփոփ արդյունքներն ու դրանց լուծման ուղղությամբ մշակված առաջարկությունները, որոնց բովանդակությունը կայանում է հետևյալում՝

1. Համաշխարհային տնտեսության գլոբալացման և տնտեսական ինտեգրման խորացման արդի պայմաններում մեծանում է պետություն - մասնավոր հատվածի համագործակցության նշանակությունն ու կարևորությունը: Այդ համագործակցությունը հատկապես ուժեղացավ 2008թ.-ի համաշխարհային \$ինանսատնտեսական ճգնաժամից հետո, երբ գրեթե բոլոր երկրների կառավարությունները, կիրառելով քաղաքական, \$ինանսական և այլ գործիքներ, արեցին առավելագույնը մասնավոր հատվածին օգնելու և ճգնաժամային իրավիճակից դուրս գալու համար: Մինչև այժմ էլ ինչպես աշխարհի առանձին երկրներում, այնպես էլ երկրների տնտեսական միություններում շարունակվում են տնտեսական ճգնաժամի սոցիալ-տնտեսական հետևանքների հաղթահարմանն ուղղված կոորդինացման աշխատանքները:

2. Անցումային տնտեսությամբ երկրների բարեփոխումները բազմաթիվ և բազմակողմանի են: Այդ վերափոխումները իրականացվել են տարբեր «արագություններով» ու տեմպերով և, բնականաբար, տարբեր են եղել ստացված արդյունքները: Այդ ամենով հանդերձ, նախկին համայնավարական երկրներում իրականացված բարեփոխումների նպատակը շուրջ կայական ազատ



հարաբերությունների կառուցումն էր, որը հիմնականում իրականացվեց երկու ճանապարհով. նախ՝ մասնավորեցվեց և ապապետականացվեց պետական գույքը և, երկրորդ, հնարավոր դարձավ մասնավոր ձեռնարկությունների ստեղծումն ու դրանց գործունեությունը: Դրաարդյունքում պատմական բավականին կարճ ժամանակահատվածում պետական սեփականության կողքին ստեղծվեց մասնավոր սեփականությամբ տնտեսության հատվածը, որը ժամանակի ընթացքում անցումային տնտեսությամբ երկրներում գերիշխող դարձավ: Ու, թեև անցումային երկրների մի մասում լիարժեքորեն չեն պահպանվում ժողովրդավարական հիմնական արժեքները (կասկածելի ընտրություններ, խոսքի և մամուլի սահմանափակումներ, մարդու իրավունքների ոտնահարումներ, մրցակցության իմիտացիա և այլն), այնուհանդերձ, պետական և մասնավոր հատվածների միջև համագործակցությունը արդեն կայացած փաստ է և դա այն առաջնորդիչ ուժն է, որը երաշխավորում է այդ հարաբերությունների սոցիալ-տնտեսական ու քաղաքական առաջընթացը:

3. Տնտեսության մասնավոր հատվածի զարգացումը և դրանում ներդրումներ կատարելը ապահովում է մասնավոր հատվածում ձեռնարկատիրության առաջընթացը և հասարակության համար անհրաժեշտ ապրանքների արտադրությունը և ծառայությունների մատուցումն, ինչը էական նշանակություն ունի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման համար: Հատկապես անցումային և եկամտունեի ցածր մակարդակ ունեցող երկրներում, մասնավոր հատվածն ունի կարևոր դերակատարում բնակչության խոցելի շերտերին աջակցելու և աղքատության նվազեցման գործում: Պետական հատվածի ջանքերին զուգահեռ, մասնավոր ներդրումները հատկապես մրցունակ շուկաներում, հսկայական ներուժ ունեն տնտեսական աճին նպաստելու գործում: Մասնավոր շուկաները արդյունավետության աճի այն շարժիչ ուժերն են, որոնք ստեղծում և ապահովում են համապատասխան աշխատատեղեր և, որպես դրահետևանք, բնակչության բարձր եկամտունեի: Կառավարության հետ միասին լրացուցիչ դեր խաղալով տնտեսական գործունեության տարբեր ոլորտների կարգավորման, միջոցների և ծառայությունների իրացման գործում, մասնավոր հատվածը և դրանում կատարվող ներդրումները կարող են օգնել ապահովելու մարդկանց հիմնական ապրանքներով, ծառայություններով և կյանքի գոյություն համար անհրաժեշտ այնպիսի պայմաններով, ինչպիսիք են՝ առողջապահության, կրթության, սոցիալական ապահովության և սոցիալական ու արտադրական ենթակառուցվածքների և, հատկապես, հեռահաղորդակցության, էներգետիկայի, տրանսպորտի, ջրամատակարարման ու ջրահեռացման ոլորտների բարելավումը:

4. Մասնավոր հատվածի դերը տնտեսության մեջ չափվում է մի շարք ցուցանիշների օգնությամբ, որոնցից հիմնականներն են՝ մասնավոր հատվածին տրված ներքին վարկերը (%-ով ՀՆԱ-ի

նկատմամբ), մեկ օրացուցային տարվա ընթացքում գրանցված նոր տնտեսավարող սուբյեկտները, գրանցված նոր ձեռնարկությունների մուտքի խտությունը (15-64 տարեկան մարդու հաշվով), շատ փոքր (միկրո-), փոքր և միջին ձեռնարկությունների քանակը՝ բնակչության 1000 մարդու հաշվով:

Ցանկացած երկրում մասնավոր հատվածի զարգացման հիմնական աղբյուրներից մեկը ներքին վարկերն են: Այդ վարկերի ծավալի հարաբերությունը ՀՆԱ-ին լավագույն ձևով է բնութագրում մասնավոր հատվածի զարգացման հնարավորությունը: 2015 թվականին ցածր եկամտով երկրներում այդ հարաբերակցությունը կազմել է 19.6%, միջինից ցածր եկամտով երկրներում՝ 45.5%, միջինից բարձր եկամտով երկրներում՝ 117.1%, բարձր եկամտով երկրներում՝ 148.4%: Այլ կերպ ասած, այլ հավասար պայմաններում, բարձր եկամտով երկրներում ցածր եկամտով երկրների համեմատ 7.4 անգամ ավելի հեշտ է ներքին վարկերի ստացումը: Ներքին վարկերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին 2015 թվականին ամենաբարձրն է եղել Կիպրոսում (250.8%), Հոնկոնգում (207.6%), Ճապոնիայում (194.3%): Այդ ցուցանիշը ամենացածրն է եղել Հարավային Սուդանում (2.7%), Սինգապուրում (4.9%) և Սուդանում (8.2%):

ՀՀ-ում այդ ցուցանիշը կազմել է 45.6%, Ադրբեջանում՝ 38.5%, Վրաստանում՝ 49.8%, Իրանում՝ 54.4%, Թուրքիայում՝ 80.0%:

5. Ազատ շուկայական հարաբերությունների զարգացման և ապահովման գրավականներից է պետության, ձեռնարկատիրության և հասարակության փոխշահավետ գործընկերային հարաբերությունների ձևավորումը, ինչը դրականորեն է ազդում հասարակության անդամների բարեկեցության բարձրացման, պետական ինքնիշխանության հաստատման, տնտեսական, սոցիալական և մշակութային քաղաքականության արդյունավետության բարձրացման վրա: Այս հարաբերությունների համակարգում պետությունը հանդես է գալիս որպես առաջնորդող և միաժամանակ միջնորդ օղակ, որը համագործակցում է ոչ պետական հատվածի հետ՝ համապատասխան իրավական դաշտի ձևավորմամբ և կառավարմամբ, ինչպես նաև հասարակության հետ՝ համապատասխան սոցիալական և մշակութային բնույթի խնդիրների լուծմամբ: Հետևաբար, առաջնային պլան է մղվում պետության կողմից օրենքների, որոշումների և այլ իրավական ակտերի ընդունման գործընթացը, ինչից կախված է դառնում ձեռնարկատիրության վարկանիշը՝ նպատակ ունենալով չխախտել երկուստեք տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական շահերը:

6. 2014 թվականին պետական սեփականության բաժինը ՀՀ-ում ամենաբարձրն է եղել «Կրթություն» (77.5%, 28.1 մլրդ դրամ), «Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում» (52.4%, 69.0 մլրդ դրամ), «Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» (31.7%, 58.5 մլրդ դրամ) ենթահատվածներում, իսկ ամենացածրը՝ «Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում» (0%),

«Մշակող արդյունաբերություն» (0.2%, 832.6 մլն դրամ), «Կացութային և հանրային սննդի կազմակերպում» (0.4%, 232.3 մլն դրամ) ենթահատվածներում:

Ազգային մասնավոր սեփականության բաժինը 2014 թվականին ամենաբարձրն է եղել «Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում» (89.3%, 400.2 մլրդ դրամ), «Կացութային և հանրային սննդի կազմակերպում» (79.3%, 40.9 մլրդ դրամ), «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» (72.4%, 30.7 մլրդ դրամ) ենթահատվածներում, իսկ ամենացածրն է եղել «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» (6.8%, 7.0 մլրդ դրամ), «Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» (7.5%, 13.9 մլրդ դրամ), «Կրթություն» (13.2%, 4.8 մլրդ դրամ) ենթահատվածներում: Օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող սեփականության բաժինը 2014 թվականին ամենաբարձրն է եղել «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» (93.2%, 95.6 մլրդ դրամ), «Տեղեկատվություն և կապ» (78.8%, 125.3 մլրդ դրամ), «Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» (60.8%, 112.4 մլրդ դրամ) ենթահատվածներում, իսկ ամենացածրը՝ «Մշակույթ, զվարճություններ և հանգիստ» (1.1%, 813.4 մլն դրամ), «Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում» (3.8%, 5.0 մլրդ դրամ), «Կրթություն» (9.3%, 3.4 մլրդ դրամ) ենթահատվածներում:

7. Ընդհանուր առմամբ, 2014 թվականին ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածում համախառն ավելացված արժեքի 8.4%-ը (184.1 մլրդ դրամ) թողարկվել է պետական հատվածում, 59.8%-ը՝ օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող կազմակերպություններում: Ըստ որում ոչ ֆինանսական հատվածում 2014 թվականին 2012 թվականի համեմատությամբ պետական սեփականության ենթահատվածի բաժինը նվազել է 0.3 տոկոսային կետով (2012թ.-ի 8.7%-ից 2014 թ.-ին հասնելով 8.4 տոկոսային կետի), ազգային սեփականության ենթահատվածի բաժինը՝ 2.5 տոկոսային կետով՝ 2012 թվականի 62.3%-ից 2014թ.-ին այն հասել է 59.8%-ի, իսկ օտարերկրյա հսկողության տակ գտնվող կազմակերպությունների ստեղծած ավելացված արժեքի բաժինը 2014թ.-ին 2012 թ.-ի համեմատ ավելացել է 2.8 տոկոսային կետով՝ 29.0%-ից հասնելով 31.8%-ի: 2006-2014 թվականների ընթացքում ավելացված արժեքի թողարկման գործում պետական սեփականության կազմակերպությունների բաժինը ավելացել է 1.0 տոկոսային կետով 2006թ.-ի 7.4%-ից 2014 թվականին հասնելով 8.4%-ի, ազգային մասնավոր սեփականության տեսակարար կշիռը փոփոխվել է համապատասխանաբար 6.8 տոկոսային կետով, 66.6%, 59.8%, օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող կազմակերպություններում համապատասխանաբար՝ 3.1 տոկոսային կետով, 28.7%, 31.8%:

Ոչ ֆինանսական հատվածի ավելացված արժեքում ֆինանսական և ապահովագրական գործունեության ցուցանիշների ըստ սեփականության ենթահատվածների կազմում պետական սեփականության բաժինը 2014 թվականին 2012 թվականի համեմատ ավելացել է 0.5 տոկոսային կետով՝ 5.4%-ից հասնելով 5.9%-ի, ազգային մասնավոր ենթահատվածի բաժինը համապատասխանաբար նվազելով 2.5 տոկոսային կետով, 62.3%, 59.8%, օտարերկրյա վերահսկողություն և տակ գտնվող կազմակերպություններում համապատասխանաբար ավելացել է 3.3 տոկոսային կետով, 35.1%-ից հասնելով 31.8%-ի:

8. ՀՀ-ում ՀՆԱ-ի (հիմնական գներով) ստեղծման գործում բավականին ցածր է ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) բաժինը: Այսպես, 2000թ.-ին այն կազմել է թողարկված ՀՆԱ-ի մեծության միայն 2%-ը (18732.4 մլն դրամ), 2006թ.-ին 2.2% (54145.2 մլն դրամ), 2014թ.-ին՝ 4.7% (205196.9 մլն դրամ): Այսինքն, բացարձակ արժեքով ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) ստեղծած ՀՆԱ-ն 2014թ.-ին 2000թ.-ի համեմատ ավելացել է շուրջ 11 անգամ: Թեև այդ կառուցվածքային հատվածն ունեցել է աճի բավականին բարձր տեմպ, սակայն նրաբաժինը շարունակում է մնալ ցածր:

Ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածի ՀՆԱ-ի կառուցվածքի ուսումնասիրությունը ըստ սեփականության ենթահատվածների (%-ով) ցույց է տալիս, որ 2000-2014թթ. նկատելիորեն (15.6 տոկոսային կետով՝ 2000թ.-ի 16.2%-ից 2014թ.-ին հասնելով 31.8%-ի) ավելացել է օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող հատվածի բաժինը, որը ձեռք է բերվել ազգային մասնավոր հատվածի (3.6 տոկոսային կետով) և հիմնականում պետական հատվածի (12.0 տոկոսային կետով) նվազեցման հաշվին: Այլ կերպ ասած 2000-2014թթ. ժամանակահատվածում ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածի ՀՆԱ-ի կառուցվածքում գրեթե 2 անգամ ավելացել է օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող սեփականության կշիռը:

9. 2000-2014թթ. ժամանակահատվածի ՀՀ ՀՆԱ-ի, ըստ տնտեսության հատվածների և վերահսկողության հատկանիշի, վերլուծությունից հատկապես նկատելի է պետական կառավարման մարմինների ծախսերի աճը: Այսպես, եթե տնտեսության կառուցվածքային այդ հատվածում ՀՆԱ-ի աճը 2007թ.-ին 2006թ.-ի համեմատ ավելացել է 28.2 մլրդ դրամով, 2008թ.-ին 2007թ.-ի համեմատ՝ 18.0 մլրդ դրամով, 2009թ.-ին 2008թ.-ի նկատմամբ՝ 47.3 մլրդ դրամով, 2010թ.-ին 2009թ.-ի նկատմամբ՝ 29.1 մլրդ դրամով, 2011թ.-ին 2010թ.-ի նկատմամբ՝ 25.2 մլրդ դրամով, ապա 2014թ.-ին 2013թ.-ի նկատմամբ 49.9 մլրդ դրամով (իսկ 2012թ.-ի նկատմամբ՝ 85.4 մլրդ դրամ): Նույնիսկ 2009թ.-ին ՀՆԱ-ի 14.1%-ով անկման պայմաններում պետական կառավարման ծախսերի 121.9%-ով ավելացումը 2009թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ, կամ 2010թ.-ին 2009թ.-ի նկատմամբ 109.2%-ով ոչ մի լուրջ փաստարկով հիմնավորված չէր, քանի որ այն նյութական բարիքների կամ

ծառայությունների ծավալի ավելացման փոխարեն, նպաստել է շրջանառության մեջ դրամական զանգվածի ավելացմանը: Ութնամյակի արդյունքում մարմիններում ծախսերի ավելացումը (հիմնականում աշխատավարձի ավելացումը) ունի սոցիալական կարևոր նշանակություն, այնուհանդերձ, մակրոտնտեսական ցուցանիշների առումով դրա աճը չի խրախուսվում:

10. Հայաստանի երրորդ Հանրապետությունում իրականացված բարեփոխումների (դրանք հիմնականում վերաբերում էին ՀՀ տարածքում տնտեսական գործունեության ազատությանը, գործունեության պետական մենաշնորհի վերացմանը, բազմակացութեան սեփականության իրավունքի վրա հենված տնտեսության ստեղծմանը, ինչպես նաև պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) և այնպիսի քաղաքականության իրականացմանը) արդյունքում ձևավորվել է նոր տնտեսություն, որտեղ մասնավոր սեփականության բաժինը թողարկվող ՀՆԱ-ում կազմում է ավելի քան 80%, իսկ պետական մասնաբաժինը՝ 20%-ից պակաս է (ի դեպ, եվրամիության երկրների ՀՆԱ-ում մասնավոր և պետական հատվածների հարաբերակցության միջին ցուցանիշը նույնպես կազմում է 80:20): Համեմատության համար նշենք, որ աշխարհի երկրների շարքում, տնտեսության մեջ ամենափոքր պետական սեփականության բաժին ունի աշխարհի ամենահզոր պետությունը՝ ԱՄՆ-ը, որը գնահատվում է 2-5%, և բոլորի կողմից ընդունվում է, որ մասնավոր սեփականության մեծ կշիռը ԱՄՆ-ում այդ երկրի զարգացման հիմնական առաջնորդ ու ժերից մեկն է:

11. Ներկայումս հատկապես առաջնահերթ է ՀՀ կառավարության համակարգում օժանդակ կառավարչական ծառայությունների խոշորացման, կենտրոնացման և արտաքին աղբյուրներից ձեռք բերման (outsourcing) հնարավորությունների ընդլայնումը: Խոսքն, առաջին հերթին, այնպիսի օժանդակ կառավարչական ծառայությունների մասին է, ինչպիսիք են՝ ներքին աուդիտը, փրատվական ծառայությունները, հասարակական հիմունքներով խորհրդակցականների ներգրավումը առկա վճարովի ծառայությունների փոխարեն, անձնակազմի կառավարումը, տեղեկատվական տեխնոլոգիաների աշխատանքի համակարգումը, իրավաբանական ծառայությունը, հաշվապահությունը, ֆինանսական հսկողությունը, կազմակերպության բյուջեի պլանավորումը, արտաքին կապերը, ընդհանուր բաժնի աշխատանքները, տրանսպորտային ծառայությունները, մաքրության ապահովման ծառայությունները: Ըստ որում, նշված ծառայությունների մի մասը կարելի է խոշորացնել (օրինակ՝ միավորել այլ գերատեսչության համանման ծառայության հետ), կենտրոնացնել (բոլորը մեկ տեղում կամ մեկ կազմակերպության միջոցով), դրանք ամբողջովին ձեռք բերել մասնավոր հատվածից: Ակնհայտ է նաև, որ «դրսից» ծառայությունների ձեռք բերումը և վերը նշված պետություն - մասնավոր հատվածի համագործակցությունը

զգալ ի որեն կեժանացնի այդ ծառայ ու թյ ու ն ն երի մատուցման արժեքը, կբարձրացնի կառավարման որակը, ինչպես նաև կառավարման ոլորտ կներմուծի առաջավոր կառավարման եղանակներն ու մեթոդները:

12. ՀՀ-ում պետություն – մասնավոր հատվածի համագործակցության ընդլայնման և արդյունավետության բարձրացման տեսանկյունից այժմեական է համագործակցության այնպիսի ձևերի բարելավումը, որոնք լայնորեն չեն կիրառվում (կամ դեռևս առկա չեն կանոնակարգող իրավական ակտերը, կամ դրանք ընդունվել են 2017թ.-ի սկզբին, ուստի և լայն կիրառություն չունեն): Դրանք են՝ հավատարմագրային կառավարումը, լիզինզը (\$ինանսական վարձակալությունը), պետական գույքի փոխանակությունը և ներդրումների ներգրավման նպատակով գույքի գրավադրումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ գլխում, 2017թ.-ի մարտի 1-ին ընդունված օրենքով, կատարվեց փոփոխություն, ինչը պայմանավորված էր նրանով, որ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրային կառավարման արակտիկան դեռևս լայնորեն չի տարածվել, թեև այն համարվում է կիսամասնավորեցման ձևերից մեկը, որը թույլ է տալիս գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պահպանմամբ ներգրավել մասնավոր կառավարում: Մասնավոր կառավարիչների և՛ շահադրողներ, և՛ գործելաճը շեշտակիորեն տարբերվում են պետականներից, իսկ նրանց արդյունավետությունը կասկածի տակ դնելու հիմքեր չկան:

ՀՀ-ում լիզինզային հարաբերությունների զարգացման համար կարևոր է ընդունել «Ֆինանսական վարձակալության (լիզինզի) կիրառմամբ Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը, ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության պետական գույքի օտարման գործընթացի ակտիվացման, արդյունավետության բարձրացման նպատակով քաղաքականության մշակման, դրանց պատասխանատուների նախանշման, առաջնայնությունների և իրականացման ժամկետների սահմանման անհրաժեշտությամբ:

Պետք է նշել, որ ներկայումս ՀՀ-ում պետական գույքի փոխանակության հարաբերությունները չեն կարգավորվում առանձին իրավական ակտով: Նշված հարաբերությունների կարգավորման համար հիմք են հանդիսանում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի դրույթները (հոդվածներ 589, 590), որոնք սակայն չեն սահմանում պետական գույքի առանձնահատկություններից բխող պայմանները:

Պետական գույքի փոխանակության ոլորտում առկա բացերը լրացնելու համար անհրաժեշտ է մշակել ՀՀ կառավարության առանձին որոշում, որով փոխանակության կողմ կդիտարկվի

պետությունը և իրավաբանական անձինք, համայնքները, օտարերկրյա պետությունները, միջազգային կազմակերպությունները և անհրաժեշտ է նախատեսել այն դեպքերը, երբ կարող են կատարվել փոխանակության նման գործարքները:

Թեև 2014թ.-ի հունիսի 12-ից գործում է «Ներդրումների ներգրավման նպատակով գույքի գրավադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 610-Ն որոշումը, սակայն այն դեռևս գործողության մեջ չի դրվում՝ հիմնականում պետական ծառայողների ինտերստեյան և պասիվության պատճառով: Մինչդեռ, այն լայն հնարավորություններ է բացում պետական ձեռնարկությունների գործունեության ակտիվացման նպատակով բանկային կապիտալը օգտագործելու համար: Դրան կարող է նպաստել նաև այն հանգամանքը, որ եթե 2014-1016թթ. (հոկտեմբեր) ՀՀ-ում բանկային վերաֆինանսավորման տոկոսադրույքը գտնվում էր 10-10,5%-ի միջակայքում, ապա այն ներկայումս նկատելիորեն նվազել է և այժմ կազմում է 6,0%: Բանկային վարկի նման «Էժանացումը» լուրջ նախադրյալ է վերը նշված որոշումը կյանքում կենսագործելու համար:

Առենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Ա.Մարկոսյան, Գ.Կուրդիսյան. «Տնտեսության պետական և մասնավոր հատվածների համագործակցության արդի հիմնական ուղղությունները ՀՀ-ում. տնտեսա-իրավական և գույքային ասպեկտները», «Ֆինանսներ և Էկոնոմիկա», N 1-2 (197-198), 2017թ., էջ 4-9:

2. Գ.Կուրդիսյան. «Անցումային տնտեսությամբ երկրների բարեփոխումները պետական և մասնավոր հատվածների ձևավորման համատեքստում», «Այլընտրանք» գիտական հանդես, N 1, 2017թ., էջ 294-307:

3. Գ.Կուրդիսյան. «ՀՀ ՀՆԱ-ի բաշխվածությունը ըստ վերահսկողության հատկանիշի», «Այլընտրանք» գիտական հանդես, N 2, 2017թ., էջ 182-188:

4. Ա.Մարկոսյան, Գ.Կուրդիսյան. «Մարդու և տնտեսական ազատությունները որպես շուկայական տնտեսության անկյունաքարեր», «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», N 2 (46), 2017թ., «Տնտեսագետ» հրատ., էջ 20-33:

5. Ա.Մարկոսյան, Գ.Կուրդիսյան. «Օժանդակ կառավարչական ծառայությունների օպտիմալացումը և ձեռքբերումը մասնավոր հատվածից», «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, N 2 (72), 2017թ., էջ 95-111:

6. Գ.Կուրդիսյան. «ՀՀ ՀՆԱ-ի արտադրությունը՝ ըստ ազգային տնտեսության հատվածների», «Ֆինանսներ և Էկոնոմիկա», N 3-4 (199-200), 2017թ., էջ 19-23:

## **ГРИГОР МАРТИНОВИЧ КУРГИНЯН**

### **ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ СОТРУДНИЧЕСТВА ГОСУДАРСТВА И ЧАСТНОГО СЕКТОРА (НА ПРИМЕРЕ РА)**

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика, управление хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится 26 января 2018г. в 15<sup>00</sup>, на заседании Специализированного совета 015 ВАК Республики Армения по экономике, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул. Х.Абовяна 52.

#### **Р Е З Ю М Е**

Рыночные отношения, строительством которых занимались почти все постсоветские страны на протяжении более чем четверти века, в первую очередь воспринимаются как добровольные партнерские отношения или реализация прав с целью свободного сотрудничества между государством, как инструментом регулирования, и другими субъектами рынка, представляющими в основном частный сектор экономики. Считается, что свободная рыночная экономика строится как на свободе личности (человека), так и на экономической свободе, составляя тем самым фундамент рыночных отношений, устойчивостью которого, в свою очередь, определяется совершенство всей рыночной экономики.

Настоящая диссертация посвящена взаимодействию между государством и частным сектором, которое имеет место почти во всех сферах экономической деятельности. Неудовлетворительное положение в деле обеспечения конкурентоспособности экономики РА, незначительные темпы экономического роста (который в 2016 году составил всего 0.2%) нехватка инвестиций в реальный сектор экономики, отток квалифицированной рабочей силы, “дорогостоящий” государственный аппарат, который хотя и декларирует сокращение расходов на своё содержание, однако никак не подтверждает это фактами – всё это и многое другое свидетельствуют о том, что есть необходимость переосмысления роли государства и как экономического партнёра, и как регулятора.

Основной целью исследования является обоснование основных направлений сотрудничества между государством и частным сектором в РА, а также разработка предложений по улучшению существующей практики сотрудничества и повышению её эффективности.

Для достижения поставленной в диссертационной работе цели выделены следующие задачи:

- исследовать значение обеспечения экономической свободы для рыночных преобразований и перехода к рынку в постсоветских странах;
- проанализировать результаты проведения реформ в странах с переходной экономикой в контексте развития государственного и частного партнёрства;



- исследовать основы взаимного сотрудничества в цепочке "государство – предпринимательство - общество";
- выявить и проанализировать состав и структуру ВВП РА по секториальным признакам;
- исследовать существующие формы и практику сотрудничества между государством и частным сектором экономики;
- изучить экономико-правовые и имущественные аспекты сотрудничества государственного и частного секторов;
- представить возможность и направления оптимизации вспомогательных управленческих услуг, а также изучить возможности передачи прав на предоставление таких услуг частному сектору;
- предложить основные направления дальнейших реформ, направленных на улучшение сотрудничества государства и частного сектора.

Основные научные результаты исследования имеют теоретическое и практическое значение, научная новизна которых заключается в следующем:

1. Исследована структура образования ВВП (по отраслям национальной экономики, видам ведения хозяйственной деятельности, финансовому и нефинансовому секторам экономики, видам владения собственностью) и выявлены несоответствия и дисбаланс, существующий в образовании ВВП.

2. Выявлено, что по сравнению с другими структурными составляющими валового внутреннего продукта РА сектор "Органы государственного управления" за 2000-2014гг. имел значительный опережающий рост, составляющий 176,8% (т.е. на 1% роста ВВП рост этой её части составил 1,77%), что привело к увеличению доли этого сектора в ВВП на 2,0 процентных пункта в 2000-2014 годах. С целью предотвращения этих нежелательных изменений и снижения расходов предлагается провести реформы в структурном секторе "Органы государственного управления", выявить конкурентные и альтернативные источники предоставления государственных услуг и более широкого использования частного сектора, особенно при осуществлении вспомогательных управленческих услуг.

3. Обоснована и оценена необходимость развития взаимодействия государства и частного сектора экономики с использованием более широкого спектра форм и методов сотрудничества, в частности совершенствования и применения таких форм как доверительное управление, лизинг (финансовая аренда), залог государственной собственности с целью привлечения инвестиций и др.

# **GRIGOR MARTIN KURGHINYAN**

## **THE MAIN DIRECTIONS OF COOPERATION OF THE STATE AND THE PRIVATE SECTOR (ON THE EXAMPLE OF RA)**

The dissertation is submitted for pursuing of scientific degree of PhD of economic sciences in the field 08.00.02 “Economics, Management of the Economy and its Branches”

The defense of the dissertation will take place at 15<sup>00</sup>, on January 26, 2018, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.  
Address: 52 Abovyan str., Yerevan, 0009, Armenia

### **S U M M A R Y**

Market relations, the construction of which was carried out by almost all the Post-Soviet countries for more than a quarter of a century, is primarily perceived as a voluntary partnership or the exercise of rights for free cooperation between the state as a regulatory instrument and other market actors, representing mainly the private sector of the economy. It is believed that a free market economy is built both on the freedom of the individual (person) and on economic freedom, thus forming the foundation of market relations, the stability of which, in turn, determines the perfection of the entire market economy.

This dissertation is devoted to the interaction between the state and the private sector, which takes place in almost all spheres of the economic activity. The unsatisfactory situation in ensuring the competitiveness of the economy of the Republic of Armenia, the insignificant rate of economic growth (which in 2016 was only 0.2%), the lack of investment in the real sector of the economy, the outflow of skilled labor force, the "expensive" government, although declaring a reduction in its maintenance costs, but does not confirm this fact - all this and much more factors indicate that there is a need to rethink the role of the state and as an economic partner and also as a regulator.

The main objective of the study is to substantiate the main areas of cooperation between the state and the private sector in the Republic of Armenia, as well as to develop proposals for improving the existing practice of cooperation and improving its effectiveness.

To achieve the goal set in the thesis, the following tasks are identified:

- Explore the importance of ensuring economic freedom for market transformation and transition to a market in Post-Soviet countries;
- Analyze the results of reforms in countries with economies in transition in the context of public and private partnership development;
- Explore the basics of mutual cooperation in the chain "state - enterprise - society";
- Identify and analyze the composition and structure of the GDP of the Republic of Armenia on sectorial grounds;

- Explore existing forms and practices of cooperation between the state and the private sector of the economy;
- Study the economic, legal and property aspects of cooperation between the public and private sectors;
- To present the opportunity and directions for optimizing the support management services, as well as to explore the possibilities of transferring the rights to provide such services to the private sector;
- Suggest the main directions for further reforms aimed at improving cooperation between the state and the private sector.

Main scientific results of the study have theoretical and practical importance, the scientific novelty of which consists in the following:

1. Based on the study of the national accounts of the Republic of Armenia, the structure of GDP education was studied (by branches of the national economy, types of economic activity, financial and non-financial sectors of the economy, types of property ownership) and identified imbalances and imbalances in GDP formation.

2. It was revealed that in comparison with other structural components of the gross domestic product of the Republic of Armenia, the sector "Governmental bodies" for 2000-2014. had a significant outstripping growth of 176.8% (that is, a 1% increase in GDP growth of this part was 1.77%), which led to an increase in the share of this sector in GDP by 2.0 percentage points in 2000-2014 years. In order to prevent these undesirable changes and reduce costs, it is suggested to carry out reforms in the structural sector "Governmental bodies", to identify competitive and alternative sources of public services and wider use of the private sector, especially in the provision of support management services.

3. The need for the development of interaction between the state and the private sector of the economy based on a wider range of forms and methods of cooperation, in particular the improvement and application of forms such as trust management, leasing (financial leasing), pledging state property for the purpose of attracting investments, etc., is substantiated and evaluated.